

րոտաց ձեռքը մատնեց: Փոքր ժամանակէն յետոյ Ռազվա քաղաքն ալ նոյն թշուառութեան մէջ ընկաւ: Եւ այս երկու քաղաքաց փողոցները հազարաւոր քրիստոնէից անմեղ արեամբը ներկուեցան: Տիւրզլիները Սայտայի շրջակայքը յիսունէն աւելի քրիստոնէից գեղեր այրեցին: Ընակիչները ըստ մեծի մասին թրէանցուցին: ստացուածքնին կողոպտեցին: անասունները քջեցին տարին ու ցաները տալն ու վրայ ըրին: Ճէճին գաւառին քրիստոնէաները Տիւրզլիներուն ձեռքէն փախչելով՝ Սայտա գնացին: Բայց տեղւոյն մահմէտական բը-

նակիչները դիմացնին ելան: ու իրենց քարոզիչներուն գրգռելովը՝ զանաք սոսկալի տանջանաց եւ մարտիրոսական մահուան մատնեցին: Այն բարբարոսաց կատաղութիւնը սոսկ մարդասպանութեամբ չէր կշտանար: զաւակները մօրերուն գրկին մէջ կմեռցընէին: կընիկները էրիկներուն ու աղջկունքը ծնողացը աչքին առջեւ կշարչարէին. մեռած մարդկանց դիակները կկտրատէին: անգամները կը յօշոտէին: փորոտիքը դուրս կհանէին: եւ այնպէս կտրատուած արիւնաթաթախ դիակները շներուն կերակուր կնետէին:

(Աւարտն յառաջիկայս.)

Ն Ե Ր Ք Ի Ն Լ Ո Ւ Ր Ե Ր.

Թերէք գետը Գաղպէք լեռներէն կըրխի ու մեծ եւ փոքր Կապարթանները իրարմէ բաժնելով՝ կթափի Կասպից ծովը: Կըսեն թէ այս գետը տէրութիւնը մաքրել պիտի տայ որ շոգենաւ քալէ վրան մինչեւ Կասպից ծովը. ուրով շատ կրնան ծաղկիլ Վլատիկաւկաս: Մոգտոք եւ Դղլար քաղաքներն որ Թերէքին վրայ են: — Ռուսաստանէն հեռագրական թերը մինչեւ Պօլիս երթալու համար՝ մինչեւ ցայժմ Օտեսսայէն Աւստրիա կանցնի ու անկէց կերթայ Պօլիս: Մօտերս Քիշնեւի հեռագրական գիծը հասուցեր են մինչեւ Մոլտաւիոյ սահմանը: Եաշէն ալ մինչեւ Ռուսաց սահմանագլուխը. երկու տէրութեանց մէջ գրուելու պայմանները հաստատուածին պէս՝ այս նոր հեռագրական գիծը պիտի սկսի բանիլ:

— Ներքին գործոց Ռստիկանարանէն իմաց տրուեցաւ թէ այսուհետեւ անցագիր պիտի չպահանջուի այն ճամբորդներէն որ Սեւ ծովուն վրայ Ռուսաց մէկ նաւահանգստէն մէկալը կերթան շոգենաւով կամ հասարակ նաւով: — Կըսուի թէ քիչ ժամանակէն Ռուսաց շոգենաւները ուղղակի երթեւեկութիւն պիտի ընեն Կովկասու ծովեզերքէն մինչեւ Կոստանդնուպօլիս:

— Թէոդոսիոյ ընակիչներուն մեծ ուրախութիւն բերաւ կաղանդին օրը այս լուրը թէ երկաթուղին անխափան եւ անյտպաղ ամենայն փութով առաջ պիտի երթայ: եւ թէ այսուհետեւ վախ չկայ որ դադրի կամ ուշանայ անոր շինուածքը՝ որ արդէն սկսած ու 40 վերսթէն աւելի առաջ գնացած է:

ՀԱՆԵԼՈՒԿ.

Նա հինգ ոտքով է ուժեղ կենդանի
Որ վեցօրէից մէջ չըգըտանի:
Երբ երկու ոտիցը վերայ կանգնի,
Իւր ձայնեղ ուժեղ հայրը կըլինի.

Իսկ երբ իւր երեք ոտքովը շըրջի՝
Նա այն բախտաւոր մարդուն նըմանի
Որ զըրկեց զորդին սրա հօրն ետեւէն
Եւ հօրմէն առաջ՝ թագ զըտաւ ճամբէն:

1861 տարւոյս Օրացուցին Յունուարի Հանելուկներուն Մեկնութիւնը.

Առաջին Հանելուկը կնշանակէ ՕՐԱՅՈՅՑ. — Երկրորդը ԳՐԻՉ:

Հրամայեցաք տպագրել: Իթեղոսիա, ի23 Գեկտեմբերի 1860. Գարրիէլ Վ. Այվազեան.

ԻՏԱՊԱՐԱՆԻ ԽԱՎԿԱՆ ՈւՍՈՒՄՆԱՐԱՆԻ Հայոց: